

Մանկապատանեկան հանձնաժողովը 2007թ. մայիսի 17-ին ընդունել է հետևյալ որոշումները՝

- Սեպտեմբերին կայանալիք Եվրոպայի պատանեկան առաջնություն Հայաստանի շախմատի ֆեդերացիայի կողմից գործուղել հետևյալ մարզիչներին՝ Ակոպով Ռոման, Օրոյան Վրեժ:
- Եվրոպայի պատանեկան առաջնության անհատական տեղը հատկացնել մինչև **18** տարեկանների չեմպիոն, միջազգային վարպետ Ավետիք Գրիգորյանին:
- Եվրոպայի պատանեկան առաջնության նախապատրաստական հավաքը անցկացնել օգոստոսի վերջին կամ սեպտեմբերի սկզբին:
- Նոյեմբերին կայանալիք Աշխարհի պատանեկան առաջնություն Հայաստանի շախմատի ֆեդերացիայի կողմից գործուղել հետևյալ մարզիչներին՝ Եղիազարյան Արսեն, Խաչատրյան Վահագն:
- Աշխարհի պատանեկան առաջնության նախապատրաստական հավաքը անցկացնել հոկտեմբերի վերջին:
- Հոկտեմբերին կայանալիք մինչև **20** տարեկան Աշխարհի տղաների առաջնությանը իրավունք ունեն մասնակցել մինչև **18** տարեկան **1-3-րդ** տեղերը գրաված շախմատիստները, **16** տարեկանների չեմպիոնը, միջազգային վարպետները և **2400**-ից բարձր միջազգային վարկանիշ ունեցող շախմատիստները: Մյուս երեք տեղերի համար անցկացնել ընտրական առաջնություն հուլիսի **25**-ից մինչև օգոստոսի **4**-ը, որտեղ իրավունք ունեն մասնակցել **2150-2400** վարկանիշ ունեցող բոլոր շախմատիստները: